ԱՆՑԱԾ ՈՒՂՈՒ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ

ՎԱՐԴԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

Վազգէն Մանուկեանը իր մամուլի ասուլիսներից մէկում խոստովանել է, որ դեռեւս չի արուած վերջին երեք-չորս տարիներին Ղարաբաղ Կոմիտէ»-Հայոց Համազգային Շարժում կազմակերպութեան քաղաքական գործունէութեան վերլուծութիւնը: Մինչդեռ, շարժման միւս ղեկավարները ընդհանրապէս խուսափում են անդրադառնալ այս խնդրին՝ վկայելով Ղարաբաղեան շարժման բարձր հեղինակութիւնից, որը նոյն ղեկավարութիւնը մամուլի ազատութեան եւ անգամ բազմակուսակցական բացակայութեան պայմաններում յաղթեց ընտրարշաւում եւ ստեղծեց իր կառավարութիւնը: Ի հարկէ իդէալականացնել Ղարաբաղեան շարժումը եւ նրա ղեկավարներին ամենահեշտ ձեւն է, եւ վերջին տարիների փորձը ցոյց է տալիս, որ ժողովուրդը դէմ չէ այդպիսի իդէալականացմանը, քանի որ իսկական հերոսը եւ շարժիչը այդ շարժման հենց ինքն է հանդիսանում: Սակայն «Հոկտեմբերեան մեծ յեղափոխութեան» իդէալականացման դառը փորձը ցոյց է տալիս, որ այս ճանապարհը լի է բազմաթիւ վտանգներով: Չվերլուծելով մօտ անցեալի ճիշտ եւ սխալ քայլերը, մենք բոլորս, եւ առաւել նրանք, ովքեր կանգնած են ղեկավարման վահանակի մօտ, վտանգածի տակ ենք դնում մեր հետագայ որոշումները եւ գործողութիւնները եւ կարող ենք լուրջ փորձութիւնների առաջ դնել մեր ժողովրդին:

Վերջապէս, երբ մենք իսկապէս կոմունիստական վարուելակերպին դէմ ենք, ապա պէտք է ընդունել, որ անցեալը խորհրդաւորութեամբ եւ գաղտնի վարագոյրով շղարշելու մեթոդը հենց կոմունիստների կողմից ընդունուած գործելակերպն էր, իսկ քաղաքակիրթ աշխարհում հակառակը՝ ե՛ւ անցեալը, ե՛ւ ներկան եւ առաւելապէս երկրի ղեկավարութիւնը ենթակայ են մշտական քննարկման եւ քննադատման:

Նախ պէտք է յստակեցնել, որ Ղարաբաղեան շարժումը այս կամ այն մարդկանց խմբի մենաշնորհը չէ: Ոտքի էր բարձրացել ողջ հայ ազգը թէ Հայաստանում, թէ Արցախում եւ թէ ներքին եւ արտաքին սփիւռքում: Առաւել եւս դա մենաշնորհը չէ այն մարդկանց, ովքեր հետագայում մտան Հայոց Համազգային Շարժման վարչութեան մէջ: Քանի որ վերջինիս մէջ չէին ընդգրկուած Ղարաբաղեան շարժման սկզբում մեծ ջանք եւ եռանդ ցուցաբերած այնպիսի անձինք, ինչպիսիք են Իգոր Մուրադեանը, Զօրի Բալայեանը, Սօս Սարգսեանը, Ռազմիկ Դաւոյեանը եւ այլն:

Եթէ մի պահ մեզ դնենք արտասահմանից եկած, եւ վերջին անցուդարձին անծանօթ օտարերկրացու տեղը, ապա համեմատելով 1988 թուականի եւ այժմեան պետական պաշտօնաթերթերը, հեշտութեամբ կը յայտնաբերենք «պետական» մտածելակերպի ապշեցուցիչ մօտիկութիւնը: Նոյն ծայրայեղութիւնների մէջ չընկնելու, զգացմունքները բանականութեամբ փոխարինելու, միասնական գործելու կոչերը (ընդ որում միասնութեան տակ հասկացւում են հաւատարմութեան պաշտօնական դիրքորոշումները): Նոյն «ամօթխածութիւնն» է Արցախեան հարցում (այն ժամանակ վախենում էին, որ Մոսկուան մեզանից կը նեղանայ, հիմա՝ Բաքուն): Երբ մեր հարեւանները առաջին անգամ փորձեցին բռնագաղթի ենթարկել Ազատ եւ Կամօ գիւղերը, Հայաստանի այժմեան ղեկավարութիւնը ոտքի հանեց ողջ Երեւանը (փառք եւ պատիւ նրանց դրա համար) եւ հին կառավարութեան երեսին շպրտեց անճարակութեան եւ ազգային շահերի պաշտպանումից խուսափման մեղադրանքը: Երբ այս տարուայ Մայիսին հրի եւ սրի մատնուեցին Մարտունաշէնը, Գետաշէնը եւ բազմաթիւ այլ հայկական գիւղեր, ընդդիմադիր կուսակցութիւնների թոյլ բողոքը իշխանութիւնների անկարողութեան դէմ վերջիններիս կողմից գնահատուեց որպէս հանրապետութիւնում իրավիճակը անկայունացնելու փորձ: Այս նոյն պատկերը կրկնուեց վերջերս, երբ Մեխակ Գաբրիէլեանը խորհրդարանում պահանջեց քննարկել Ժնեւ լեզնովոդսկում Հայաստանի պատուիրակութեան ստորագրած կոմիւնիկէն: Մի կոմիւնիկէ, որով անօրինական էին համարւում խորհրդարանի կողմից Արցախի վերաբերեալ ընդունուած բոլոր որոշումները:

Պարոն Տէր Պետրոսեանը եւ ուրիշները հաւանաբար մոռացել են, թէ շատ աւելի անհիմն առիթներով ինչպէս եւ ինչպիսի բառերով էին արտայայտւում նոյն այդ խորհրդարանի բեմից: Յիշեցնեմ, որ կոմունիստները իշխանութեան գլուխ գալով, շատ արագ վերացրեցին այն քիչ թէ շատ ազատութիւնները, որոնք գործում էին ցարիզմի օրօք: Այսօր, երբ նայում ես, խորհրդարանի նիստերը այնպիսի տպաւորութիւն են ստեղծում, որ եթէ Լ. Տէր Պետրոսեանը առաջարկի վաղուանից բոլոր պատգամաւորներին բեղ եւ մօրուս պահել, ապա որոշումը կ՚ընդունուի ձայների ջախջախիչ մեծամասնութեամբ եւ միւս օրը Հայաստանի հեռուստատեսութիւնը (քաղաքակիրթ ոչ մի երկրում պետական հեռուստատեսութիւնը չի ծառայում կուսակցական շահերին) մի քանի հաղորդում կը նուիրի բեղ-մօրուքի նպատակայարմարութեան մասին: Եւ այսքանից յետոյ ընդդիմադիր կուսակցութիւնները, մասնաւորապէս Դաշնակցութիւնը, մեղադրւում են կոմունիստների հետ գաղտնի դաշինք ստեղծելու մէջ: Եթէ ինչ-որ մէկի մօտ կասկածները չեն փարատուել, թող վերցնեն խորհրդարանի վերջին հինգ-վեց ամսուայ որոշումները եւ պարզեն, թէ ո՞ւմ օգտին են քուէարկել խորհրդարանի կոմունիստ պատգամաւորները:

Բոլշեւիկեան պատմութիւնից գիտենք, որ այդ կուսակցութեան առանձնայատուկ ձիրքն է եղել միշտ ծայրայեղ քայլերի գնալը: 88ի ամռանը, երբ Արցախը փաստօրէն խզել էր կապերը Ադրբեջանի հետ, իսկ Մոսկուան մատների արանքով էր նայում այդ փաստին (խորհրդային երկրում միշտ էլ «դէ ֆակտօ» որեւէ գործ յաջողացնելը շատ աւելի հեշտ է եղել, քան «դէ յուրէ»-ն), նոյն այժմեան ղեկավարները ժողովրդին դիմեցին գործադուլի կոչերով, պահանջելով Մոսկուայից «վերջնականապէս լուծել Ղարաբաղի հարցը», միաժամանակ աւելացնելով. «Չնայած գիտենք, որ մերժելու են»: Արդիւնքում երեք եւ կէս միլիոնանոց ժողովուրդը առճակատման գնաց հինգ միլիոնանոց բանակ ունեցող խորհրդային կայսրութեան հետ եւ հայորդիների բազում նեարդային ապրումների եւ անքուն գիշերների շնորհիւ ստացաւ ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի նախագահութեան յայտնի մերժումը, որը կանաչ լոյս վառեց ադրբեջանական կողմի համար եւ սկիզբը դրեց Մոսկուայի հակահայկական գործունէութեանը: Այս տարուայ գարնանը, երբ աջակողմեան ուժերը քայլը քայլի յետեւից ամրապնդւում էին խորհրդային իշխանութեան բարձրագոյն պաշտօններում, Հայաստանի իշխանութիւնները ի ցոյց աշխարհի սկսեցին ազգայնացնել կոմունիստական գոյքը, մոռանալով, որ խորհրդային բանակը, ներքին գործերի միաւորումները, անվտանգութեան օրգանները գտնւում էին հենց նոյն կոմունիստների ձեռքում: Վերջիններս լաւ հասկանալով, որ Հայաստանի ցաւոտ տեղը Արցախն է, չյապաղեցին պատասխան գործողութիւններ ծաւալել այնտեղ եւ արդիւնքում ամայացան 23 հայկական գիւղեր:

Վերջապէս, ով չի յիշում Ազատութեան հրապարակում ժամանակին արտասանուած բոցավառ ճառերը ընդդէմ մեր ազգի անպատուաբեր կաշառակերութեան եւ դրամաշորթութեան: Ինչպիսի յուզմունքով եւ հիացմունքով էր լսում այդ ամենը ժողովուրդը եւ ինչ ստացաւ դրա փոխարէն: Այն նոյն անձինք, որոնք այն ժամանակ մայրաքաղաքի պատերին գրում էին «Նաիրիտը սպանում է մեր երեխաներին» կամ թէ «Ատոմակայանը Հայաստանի մահն է», այժմ սուսուփուս այլ գործելակերպ են որդեգրել: Միթէ իրօ՞ք ամեն ինչ յարաբերական է:

Ուզում ենք դա ընդունել, թէ ոչ դաժան ճշմարտութիւնը հետեւեալն է՝ մարդիկ, որոնք երեք տարի ժողովրդին յայտարարում էին, որ իրենք պաշտօնի համար չէ, որ պայքարի են ելել, այլ յանուն Արցախի, այսօր բազմել են ամենաբարձր աթոռներին, իսկ Արցախում նստել երազում են, ինչպէ՞ս վերականգնել գոնէ 1988 թուականի Յունուարի կարգավիճակը: Ինչ վերաբերում է Հայաստանի բնակչին, ապա նա փախչելով կոմունիստական ստրկութիւնից, միամտօրէն հաւատացած է, որ հեշտութեամբ յայտնուել է դրամատիրական դրախտի շեմին եւ ուր որ է, չգիտես ինչպէս, եւ չգիտես ում շնորհիւ, յայտնուելու է այդ դրախտում: Այս նոյն մոլորութիւնը կարնաեւ հարեւան Վրաստանում, սակայն մեր հարեւանները դրախտի փոխարէն ստացան քաղաքացիական պատերազմ: Եկէք այս անգամ դասեր քաղենք ոչ միայն մեր քաղաքական սխալներից, եւ չըփորձենք Գամսախուրդիայի օրինակով ենթադրել, որ խորհրդարանային մեծամասնութիւնը գրաւականն է կամայական որոշումներ ընդունելու: Վերջապէս եկէք փորձենք հասկանալ, թէ ի՞նչ է ինք ցանկանում մենք ստանալ 1988ի Փետրուարին եւ ի՞նչ ստացանք դրա փոխարէն: Այն ժամանակ պարզ կը դառնայ, թէ ինչո՞վ է տարբերւում Հայաստանի նոր իշխանութիւնը հնից: